Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-938-07.10.2024-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում «որակավորմանը համապատասխանող» բառերը փոխարինել «մասնագիտությանը համապատասխանող» բառերով:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը «փոխադրման» բառից հետո լրացնել «կամ կատարողականի գնահատման արդյունքներով» բառերով:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 10. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Մրցույթը հայտարարվում է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի: Եթե հայտարարված մրցույթը չի կայացել կամ մրցույթի արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոնը չի համալրվել, ապա տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարվում է երկու ամսվա ընթացքում:

2. Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքի առկայության դեպքում, եթե առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին իրավական ակտը, կամ 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված հիմքի առկայության դեպքում, եթե առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 6.2-ին մասով նախատեսված լիազորությունները դադարելու մասին իրավական ակտը, կամ 37-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով սահմանված հիմքի առկայության դեպքում, եթե առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասով

նախատեսված ծառայությունը դադարեցնելու վերաբերյալ իրավական ակտը, ապա մրցույթը կարող է հայտարարվել մինչեւ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալը:

3. Մինչեւ արտաքին մրցույթ հայտարարելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար կարող է հայտարարվել մեկ ներքին մրցույթ: Վարչապետի աշխատակազմում եւ Հանրապետության նախագահի աշխատակազմում ներքին մրցույթ հայտարարելու մասին որոշումը կայացնում են համապատասխան մարմինների աշխատակազմի ղեկավարները: Ներքին մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ մարմնի հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող հանրային ծառայողները, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, ինչպես նաեւ տվյալ մարմնի այլ պետական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված հանրային ծառայողները, որոնց կադրերի ռեզերվի վարումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով:

4. Քաղաքացուն չի թույլատրվում մասնակցել մրցույթին, եթե չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները եւ (կամ) առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որեւէ մեկը եւ (կամ) առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված հիմքը:

5. Արտաքին մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Ներքին մրցույթն անցկացվում է միայն հարցազրույցի փուլով: Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը մրցույթն անցկացնող համապատասխան մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքէջում եւ քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում: Արտաքին մրցույթի դեպքում հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, իսկ ներքին մրցույթի դեպքում՝ ոչ ուշ, քան տասնհինգ օր առաջ:

6. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային եղանակով: Մրցույթի մասնակցության հարցը որոշում է գլխավոր քարտուղարը: Գլխավոր քարտուղարի՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի մրցույթի մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը:

7. Թեստավորման փուլում ստուգվում են մասնակիցների մասնագիտական գիտելիքները, իսկ հարցազրույցի փուլում՝ մասնագիտական գիտելիքները եւ դրանք կիրառելու կարողությունները եւ կոմպետենցիաները:

8. Թեստավորումն անցկացվում է մրցույթի հայտարարությունը հրապարակելու օրվանից ոչ շուտ քան մեկ ամսվա եւ ոչ ուշ քան երեք ամսվա ընթացքում:

9. Թեստերը կազմվում են՝

1) սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրենսդրական ակտերից,

2) քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված աշխատանքի բնույթը, իրավունքներն ու պարտականությունները կանոնակարգող գործառույթներից բխող օրենսդրությունից:

10. Սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով սահմանված օրենսդրական ակտերից թեստային առաջադրանքները կազմում եւ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ 9-րդ մասի 2-րդ կետով սահմանված օրենսդրությունից թեստային առաջադրանքները՝ համապատասխան մարմինը: Քաղաքացիական ծառայության պաշտոնների ենթախմբերին համապատասխան՝ կազմվում են տարբեր բովանդակությամբ թեստային առաջադրանքներ:

11. Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստային առաջադրանքները կազմում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, բացառությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղարի եւ Հաշվեքննիչ պալատի գլխավոր քարտուղարի մրցույթի: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղարի եւ Հաշվեքննիչ պալատի գլխավոր քարտուղարի մրցույթի՝ սույն հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետով սահմանված օրենսդրությունից թեստային առաջադրանքները կազմում եւ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում եւ Հաշվեքննիչ պալատում՝ համապատասխանաբար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը եւ Հաշվեքննիչ պալատը:

12. Թեստի ավարտից հետո մրցույթի մասնակիցը անմիջապես տեղեկանում է իր ստացած արդյունքների մասին: Թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն իր արդյունքների մասով կարող է բողոք ներկայացնել գլխավոր քարտուղարին, իսկ գլխավոր քարտուղարի մրցույթի դեպքում՝ քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարին:

13. Արտաքին մրցույթի հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման փուլում Կառավարության սահմանած նվազագույն միավորի շեմը հաղթահարած եւ առավելագույն միավորներ հավաքած հինգ մասնակիցը: Եթե միեւնույն արդյունք ունենալու դեպքում առավելագույն միավորներ հավաքած եւ թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների թիվը հինգից ավելի է, ապա միեւնույն առավելագույն միավորներ հավաքած մասնակիցներն անցնում են հարցազրույցի փուլ:

14. Հարցազրույցն անցկացնում է տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի ձեւավորած հանձնաժողովը, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաեւ վարչապետի աշխատակազմի եւ Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հանձնաժողովը, բացառությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի եւ Հաշվեքննիչ պալատի, ձեւավորում է քաղաքացիական ծառայության գրասենյակը՝ համակարգող փոխվարչապետի հաստատած հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկից: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հանձնաժողովը ձեւավորում է Մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հանձնաժողովը ձեւավորում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, իսկ Հաշվեքննիչ պալատի գլխավոր քարտուղարի մրցույթի հանձնաժողովը՝ Հաշվեքննիչ պալատը: Վարչապետի աշխատակազմի եւ Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հանձնաժողովները ձեւավորում են համապատասխան մարմինների աշխատակազմի ղեկավարները:

15. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, այն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, որի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարվել է տվյալ մրցույթը, անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, ինչպես նաեւ տվյալ պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների տիրապետման մակարդակն ստուգելու կարողություններ ունեցող այլ անձինք:

16. Հանձնաժողովը կազմված է առնվազն հինգ անդամից:

17. Հարցազրույցի փուլում հաղթող է ճանաչվում Կառավարության սահմանած նվազագույն միավորի շեմը հաղթահարած մասնակիցը: Եթե Կառավարության սահմանած նվազագույն միավորի շեմը հաղթահարած մասնակիցների թիվը մեկից ավելի է, ապա հանձնաժողովը քվեարկությամբ հարցազրույցի փուլում հաղթող է ճանաչում երկու մասնակցի, որոնցից մեկին ընտրում է իբրեւ հաղթող ճանաչված առաջին մասնակից, մյուսին՝ հաղթող ճանաչված երկրորդ մասնակից: Հանձնաժողովը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է հարցազրույցի արդյունքների վերաբերյալ եզրակացություն: Եթե հարցազրույցի արդյունքում հաղթող է ճանաչվում մեկ մասնակից, ապա հանձնաժողովի եզրակացությունը ստանալուց հետո պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը հաղթող ճանաչված մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնի: Եթե հարցազրույցի արդյունքում հաղթող է ճանաչվում երկու մասնակից, ապա հանձնաժողովի եզրակացությունը ստանալուց հետո պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը հաղթող ճանաչված առաջին մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնի: Եթե հաղթող ճանաչված առաջին մասնակիցը պաշտոնի նշանակման համար դիմում չի ներկայացնում, ապա պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է համապատասխան պաշտոնի նշանակել հարցազրույցի փուլում հաղթող ճանաչված երկրորդ մասնակցին:

18. Եթե երկու անգամ անընդմեջ հայտարարված արտաքին մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ դիմում ներկայացրած քաղաքացիներից ոչ մեկը չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով եւ (կամ) 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները, եւ (կամ) ներկայացված բոլոր դիմումներում առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որեւէ մեկը, եւ (կամ) առկա է սույն օրենքի 37-րդ

հոդվածի 8-րդ մասով նախատեսված հիմքը, ապա համապատասխան մարմինը սույն օրենքով սահմանված կարգով կարող է փոփոխել տվյալ պաշտոնի համար սահմանված պահանջները:

19. Անվանացանկում կատարված լրացումների եւ փոփոխությունների հետեւանքով առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոնները, բացառությամբ համապատասխան մարմնի վերակազմակերպման եւ (կամ) կառուցվածքային փոփոխության հետեւանքով առաջացած քաղաքացիական ծառայության պաշտոնների, զբաղեցվում են մրցույթով:

20. Համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայողի առաջխաղացումն իրականացվում է սույն օրենքով սահմանված մրցույթով կամ սույն օրենքի 14.1-ին հոդվածով սահմանված կարգով:

21. Մրցույթի արդյունքով նույն համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության այլ պաշտոնի նշանակվելու դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:

22. Մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով: Մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում հայտարարվում է նոր մրցույթ, որն անցկացվում է սույն օրենքով սահմանված կարգով:

23. Մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է Կառավարությունը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է Մարդու իրավունքների պաշտպանը, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

24. Թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձեւավորելու, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը եւ ձեւաչափը սահմանում է համակարգող փոխվարչապետը:»:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Թեստավորմանը մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային եղանակով: Թեստավորման մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը:».

2) 4-րդ մասի «Քաղաքացին չի մասնակցում» բառերը փոխարինել «Քաղաքացուն չի թույլատրվում մասնակցել» բառերով.

3) 5-րդ մասի «նվազագույն միավորից բարձր միավոր ստացած» բառերը փոխարինել «նվազագույն միավորի շեմը հաղթահարած» բառերով, իսկ «գրասենյակն առցանց կարգով» բառերը՝ «գրասենյակը տեղեկատվական հարթակում» բառերով.

4) 7-րդ մասի «հինգ թեկնածու, ապա հրավիրվում են տվյալ մասնագիտությունն ունեցող առաջին հինգ թեկնածուն» բառերը փոխարինել «թեկնածու, ապա հրավիրվում են վարկանիշային ցուցակի հաջորդ համարներում գրանցված տվյալ մասնագիտությունն ունեցող թեկնածուները» բառերով.

5) 9-րդ մասի «բոլոր խմբերի արդյունքներն ամփոփելու հաջորդ աշխատանքային օրը» բառերը փոխարինել «յուրաքանչյուր խմբի արդյունքներն ամփոփելուց անմիջապես հետո» բառերով.

6) 10-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Վարկանիշային ցուցակում գրանցված թեկնածուն հանվում է վարկանիշային ցուցակից, եթե վարկանիշային ցուցակում գրանցվելուց հետո նշանակվել է հանրային ծառայության պաշտոնի կամ դիմում է ներկայացրել իրեն վարկանիշային ցուցակից հանելու համար:» բառերով.

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «յոթ աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչեւ մրցույթ հայտարարելը» բառերով, իսկ 4-րդ մասում «յոթ աշխատանքային օրվա ընթացքում» բառերը՝ «մեկ ամսվա ընթացքում» բառերով:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.

«3.1) պահեստազորային կամ զորահավաքային զինվորական ծառայություն իրականացնելու կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու դեպքերում.».

2) 7-րդ կետի «այլ դեպքերում» բառերը փոխարինել «դեպքում» բառով:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 14.1-ին հոդվածով՝

«Հոդված 14.1. Համապատասխան մարմնում կատարողականի գնահատման արդյունքներով քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելը

1.Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավասու է ավելի բարձր թափուր պաշտոնում նշանակելու Կառավարության սահմանած կարգով վերջին երկու կիսամյակի կատարողականի գնահատման արդյունքներով դրական եզրակացություն ստացած այն քաղաքացիական ծառայողին, ով միաժամանակ՝

1) բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները.

2) երկու տարի անընդմեջ աշխատում է նույն համապատասխան մարմնում.

3) այդ մասին տվել է գրավոր համաձայնություն:

2.Քաղաքացիական ծառայողը չի կարող նշանակվել ավելի բարձր թափուր պաշտոնին, եթե տվյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարվել է մրցույթ:

3. Սույն հոդվածի 1-ին մասը չի տարածվում անվանացանկում կատարված լրացումների եւ փոփոխությունների հետեւանքով առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների, ինչպես նաեւ համապատասխան մարմնի վերակազմակերպման եւ (կամ) կառուցվածքային փոփոխության հետեւանքով առաջացած քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների վրա:»:

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում «Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող» բառերը փոխարինել «Գաղտնիության ռեժիմը ապահովող» բառերով:

Հոդված 9. Օրենքի 19-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 19. Քաղաքացիական ծառայողի վերապատրաստումը

1. Քաղաքացիական ծառայողներն իրավունք ունեն բարելավելու եւ պարտավոր են բարելավել իրենց մասնագիտական գիտելիքները եւ կոմպետենցիաները շարունակական

մասնագիտական զարգացման սկզբունքի վրա հիմնված վերապատրաստումներին մասնակցելու միջոցով:

2. Կոմպետենցիաների, ինչպես նաեւ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների համանման (նույնաբովանդակ) գործառույթներից բխող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ համապատասխան մարմնի գործունեության հիմնական ոլորտներից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները՝ համապատասխան մարմինը:

3. Վերապատրաստումն իրականացվում է յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար ըստ անհատական ծրագրի, որը կազմվում է քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատմանը զուգընթաց իրականացված վերապատրաստման կարիքների գնահատման հիման վրա:

4. Վերապատրաստում իրականացվում է նաեւ քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների տիրապետման նոր պահանջների սահմանման դեպքում՝ քաղաքացիական ծառայողի կամ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի նախաձեռնությամբ:

5. Քաղաքացիական ծառայողն իրավունք ունի պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համաձայնությամբ մասնակցելու իր զբաղեցրած պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների եւ համապատասխան մարմնի գերակա խնդիրների արդյունավետ լուծմանն ուղղված վերապատրաստման դասընթացների:

6. Մեկանգամյա վերապատրաստման մասնակցության առավելագույն ժամկետը վեց ամիս է:

7. Համապատասխան մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վերապատրաստումները կազմակերպելու եւ այդ վերապատրաստումներին քաղաքացիական ծառայողների մասնակցությունն ապահովելու համար:

8. Գլխավոր քարտուղարը վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքներն ամփոփելուց հետո կազմում է համապատասխան մարմնի քաղաքացիական

ծառայողների վերապատրաստման ծրագիրը եւ ներկայացնում քաղաքացիական ծառայության գրասենյակ՝ համաձայնեցման:

9. Վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

10. Վերապատրաստումների արդյունքով քաղաքացիական ծառայողը ստանում է կրեդիտներ: Անհատական ծրագրով հաստատված համապատասխան կրեդիտներն ստանալուց հետո քաղաքացիական ծառայողը համարվում է վերապատրաստված:

11. Սույն օրենքի հիման վրա քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստողներին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու եւ անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաեւ համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու ձեւը սահմանում է համակարգող փոխվարչապետը:

12. Օրենքով կարող է նախատեսվել քաղաքացիական ծառայողի պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականություն:»:

Հոդված 10. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «ներքին կանոնները խախտելու եւ (կամ)» բառերից հետո լրացնել «ծառայողական քննություն անցկացնելու կարգը խախտելու եւ (կամ)» բառերը:

2) 12-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում «զինվորական ծառայության զորակոչված» բառերից հետո լրացնել «պահեստազորային կամ զորահավաքային զինվորական ծառայություն իրականացնող կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցող» բառերը:

Հոդված 12. Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասում «Փորձնակ գրանցելու եւ» բառերը փոխարինել «Փորձնակի գրանցման, ստաժի հաշվարկման, աշխատաժամանակի սահմանման եւ» բառերով:

Հոդված 13. Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«4. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովն անհամատեղելիության պահանջների եւ (կամ) այլ սահմանափակումների եւ (կամ) վարքագծի սկզբունքների եւ դրանցից բխող վարքագծի կանոնների եւ (կամ) շահերի բախման կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն եւ մեթոդական աջակցություն ստանալու համար կարող է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:»:

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ մաս՝

«6. Քաղաքացիական ծառայության էթիկայի հանձնաժողովը առաջարկում է բարեվարքության հարցերով կազմակերպչին տվյալ ծառայողական քննության շրջանակներում կատարել բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ:»:

Հոդված 14. Օրենքի 35-րդ հոդվածի 3-4-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտից հետո բողոքի բացակայության դեպքում, իսկ բողոքարկման դեպքում համապատասխան եզրակացությունն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, գլխավոր քարտուղարը եզրակացությունը հրապարակում է այդ մարմնի պաշտոնական կայքէջում:

4. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը եզրակացության հրապարակումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է եզրակացությունը եւ ընդունում համապատասխան որոշում, որը հրապարակվում է տվյալ մարմնի պաշտոնական կայքէջում:»:

Հոդված 15. Օրենքի 37-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1 կետով՝

«4.1) դատական կարգով մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում.».

2) 3-րդ մասի «Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները» բառերը փոխարինել «Կատարողականի տարեկան գնահատականը, որը կիսամյակային գնահատականների միջին թվաբանականն է,» բառերով.

3) 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերը (բացառությամբ 2-4-րդ, 11-րդ, 17-րդ կետերով նախատեսված հիմքերի) ի հայտ գալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարելու մասին իրավական ակտ:».

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6.1-ին եւ 6.2-րդ մասեր՝

«6.1. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ կետերով նախատեսված հիմքերը ի հայտ գալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարելու մասին իրավական ակտը ընդունում է սույն օրենքի 21-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

6.2. Սույն հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարելու մասին համապատասխան իրավական ակտը կարող է ընդունել ոչ շուտ, քան թափուր պաշտոն առաջանալուց մեկ ամիս առաջ:»:

Հոդված 16. Օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին կետ՝

«3.1) ուսումնասիրում է համապատասխան մարմինների կողմից սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մրցույթ հայտարարելու ժամկետի խախտումները եւ անհրաժեշտության դեպքում առաջարկություն է ներկայացնում համակարգող փոխվարչապետին կամ վարչապետին.»:

Հոդված 17. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածի 2-3-րդ մասերով նախատեսված հոդվածների:

2. Սույն օրենքի 3-6-րդ, 8-14-րդ եւ 16-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում դրանցով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու օրը:

3. Սույն օրենքի 7-րդ հոդվածը եւ 15-րդ հոդվածի 2-րդ կետը ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

4. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

Կ-938-07.10.2024-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քաղաքացիական ծառայության մասին» 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-205-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետում «որակավորմանը համապատասխանող» բառերը փոխարինել «մասնագիտությանը համապատասխանող» բառերով:

Հոդված 2. Օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը «փոխադրման» բառից հետո լրացնել «կամ կատարողականի գնահատման արդյունքներով» բառերով:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 10. Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթը

1. Մրցույթը հայտարարվում է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքի: Եթե հայտարարված մրցույթը չի կայացել կամ մրցույթի արդյունքում քաղաքացիական ծառայության պաշտոնը չի համալրվել, ապա տվյալ պաշտոնի համար մրցույթ հայտարարվում է երկու ամսվա ընթացքում:

2. Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքի առկայության դեպքում, եթե առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին իրավական ակտը, կամ 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված հիմքի առկայության դեպքում, եթե առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 6.2-ին մասով նախատեսված լիազորությունները դադարելու մասին իրավական ակտը, կամ 37-րդ հոդվածի 2-րդ մասի 17-րդ կետով սահմանված հիմքի առկայության դեպքում, եթե առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ծառայությունը դադարեցնելու վերաբերյալ իրավական ակտը, ապա մրցույթը կարող է հայտարարվել մինչեւ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալը:

3. Մինչեւ արտաքին մրցույթ հայտարարելը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի որոշմամբ տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար կարող է հայտարարվել մեկ ներքին մրցույթ: Վարչապետի աշխատակազմում եւ Հանրապետության նախագահի աշխատակազմում ներքին մրցույթ հայտարարելու մասին որոշումը կայացնում են համապատասխան մարմինների աշխատակազմի ղեկավարները: Ներքին մրցույթին մասնակցելու իրավունք ունեն տվյալ մարմնի հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող հանրային ծառայողները, քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված քաղաքացիական ծառայողները, ինչպես նաեւ տվյալ մարմնի այլ պետական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված հանրային ծառայողները, որոնց կադրերի ռեզերվի վարումն իրականացվում է սույն օրենքով սահմանված կարգով:

4. Քաղաքացուն չի թույլատրվում մասնակցել մրցույթին, եթե չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները եւ (կամ) առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որեւէ մեկը եւ (կամ) առկա է սույն օրենքի 37-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված հիմքը:

5. Արտաքին մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Ներքին մրցույթն անցկացվում է միայն հարցազրույցի փուլով: Մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը մրցույթն անցկացնող համապատասխան մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքէջում եւ քաղաքացիական ծառայության գրասենյակի պաշտոնական կայքէջում: Արտաքին մրցույթի դեպքում հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ, իսկ ներքին մրցույթի դեպքում՝ ոչ ուշ, քան տասնհինգ օր առաջ:

6. Մրցույթին մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային եղանակով: Մրցույթի մասնակցության հարցը որոշում է գլխավոր քարտուղարը: Գլխավոր քարտուղարի՝ քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի մրցույթի մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը:

7. Թեստավորման փուլում ստուգվում են մասնակիցների մասնագիտական գիտելիքները, իսկ հարցազրույցի փուլում՝ մասնագիտական գիտելիքները եւ դրանք կիրառելու կարողությունները եւ կոմպետենցիաները:

8. Թեստավորումն անցկացվում է մրցույթի հայտարարությունը հրապարակելու օրվանից ոչ շուտ քան մեկ ամսվա եւ ոչ ուշ քան երեք ամսվա ընթացքում:

9. Թեստերը կազմվում են՝

1) սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված օրենսդրական ակտերից,

2) քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված աշխատանքի բնույթը, իրավունքներն ու պարտականությունները կանոնակարգող գործառույթներից բխող օրենսդրությունից:

10. Սույն հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով սահմանված օրենսդրական ակտերից թեստային առաջադրանքները կազմում եւ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ 9-րդ մասի 2-րդ կետով սահմանված օրենսդրությունից թեստային առաջադրանքները՝ համապատասխան մարմինը: Քաղաքացիական ծառայության պաշտոնների ենթախմբերին համապատասխան՝ կազմվում են տարբեր բովանդակությամբ թեստային առաջադրանքներ:

11. Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի թեստային առաջադրանքները կազմում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, բացառությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղարի եւ Հաշվեքննիչ պալատի գլխավոր քարտուղարի մրցույթի: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղարի եւ Հաշվեքննիչ պալատի գլխավոր քարտուղարի մրցույթի՝ սույն հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետով սահմանված օրենսդրությունից թեստային առաջադրանքները կազմում եւ քաղաքացիական ծառայության տեղեկատվական հարթակում տեղադրում է Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում եւ Հաշվեքննիչ պալատում՝ համապատասխանաբար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը եւ Հաշվեքննիչ պալատը: ~~Հաշվեքննիչ պալատում՝ Հաշվեքննիչ պալատը:~~

12. Թեստի ավարտից հետո մրցույթի մասնակիցը անմիջապես տեղեկանում է իր ստացած արդյունքների մասին: Թեստավորման արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում մրցույթի մասնակիցն իր արդյունքների մասով կարող է բողոք ներկայացնել գլխավոր քարտուղարին, իսկ գլխավոր քարտուղարի մրցույթի դեպքում՝ քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարին:

13. Արտաքին մրցույթի հարցազրույցի փուլին մասնակցելու իրավունք են ձեռք բերում թեստավորման փուլում Կառավարության սահմանած նվազագույն միավորի շեմը հաղթահարած եւ առավելագույն միավորներ հավաքած հինգ մասնակիցը: Եթե միեւնույն արդյունք ունենալու դեպքում առավելագույն միավորներ հավաքած եւ թեստավորման փուլը հաղթահարած մասնակիցների թիվը հինգից ավելի է, ապա միեւնույն առավելագույն միավորներ հավաքած մասնակիցներն անցնում են հարցազրույցի փուլ:

14. Հարցազրույցն անցկացնում է տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի ձեւավորած հանձնաժողովը, բացառությամբ գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի, ինչպես նաեւ վարչապետի աշխատակազմի եւ Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների: Գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հանձնաժողովը, բացառությամբ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի եւ Հաշվեքննիչ պալատի, ձեւավորում է քաղաքացիական ծառայության գրասենյակը՝ համակարգող փոխվարչապետի հաստատած հանձնաժողովի անդամության թեկնածուների ցանկից: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հանձնաժողովը ձեւավորում է Մարդու իրավունքների պաշտպանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հանձնաժողովը ձեւավորում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, իսկ Հաշվեքննիչ պալատի գլխավոր քարտուղարի մրցույթի հանձնաժողովը՝ Հաշվեքննիչ պալատը: Վարչապետի աշխատակազմի եւ Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների հանձնաժողովները ձեւավորում են համապատասխան մարմինների աշխատակազմի ղեկավարները:

15. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, այն կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, որի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարվել է տվյալ մրցույթը, անձնակազմի կառավարման ստորաբաժանման ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձը, ինչպես նաեւ տվյալ պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների տիրապետման մակարդակն ստուգելու կարողություններ ունեցող այլ անձինք:

16. Հանձնաժողովը կազմված է առնվազն հինգ անդամից:

17. Հարցազրույցի փուլում հաղթող է ճանաչվում Կառավարության սահմանած նվազագույն միավորի շեմը հաղթահարած մասնակիցը: Եթե Կառավարության սահմանած նվազագույն միավորի շեմը հաղթահարած մասնակիցների թիվը մեկից ավելի է, ապա հանձնաժողովը քվեարկությամբ հարցազրույցի փուլում հաղթող է ճանաչում երկու մասնակցի, որոնցից մեկին ընտրում է իբրեւ հաղթող ճանաչված առաջին մասնակից, մյուսին՝ հաղթող ճանաչված երկրորդ մասնակից: Հանձնաժողովը պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձին ներկայացնում է հարցազրույցի արդյունքների վերաբերյալ եզրակացություն: Եթե հարցազրույցի արդյունքում հաղթող է ճանաչվում մեկ մասնակից, ապա հանձնաժողովի եզրակացությունը ստանալուց հետո պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը հաղթող ճանաչված մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնի: Եթե հարցազրույցի արդյունքում հաղթող է ճանաչվում երկու մասնակից, ապա հանձնաժողովի եզրակացությունը ստանալուց հետո պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը հաղթող ճանաչված առաջին մասնակցին նշանակում է համապատասխան պաշտոնի: Եթե հաղթող ճանաչված առաջին մասնակիցը պաշտոնի նշանակման համար դիմում չի ներկայացնում, ապա պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը կարող է համապատասխան պաշտոնի նշանակել հարցազրույցի փուլում հաղթող ճանաչված երկրորդ մասնակցին:

18. Եթե երկու անգամ անընդմեջ հայտարարված արտաքին մրցույթին մասնակցելու համար ոչ մի դիմում չի ներկայացվել, կամ դիմում ներկայացրած քաղաքացիներից ոչ մեկը չի բավարարում սույն օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով եւ (կամ) 17-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջները, եւ (կամ) ներկայացված բոլոր դիմումներում առկա է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված հիմքերից որեւէ մեկը, եւ (կամ) առկա է սույն օրենքի 37-րդ

հոդվածի 8-րդ մասով նախատեսված հիմքը, ապա համապատասխան մարմինը սույն օրենքով սահմանված կարգով կարող է փոփոխել տվյալ պաշտոնի համար սահմանված պահանջները:

19. Անվանացանկում կատարված լրացումների եւ փոփոխությունների հետեւանքով առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոնները, բացառությամբ համապատասխան մարմնի վերակազմակերպման եւ (կամ) կառուցվածքային փոփոխության հետեւանքով առաջացած քաղաքացիական ծառայության պաշտոնների, զբաղեցվում են մրցույթով:

20. Համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայողի առաջխաղացումն իրականացվում է սույն օրենքով սահմանված մրցույթով կամ սույն օրենքի 14.1-ին հոդվածով սահմանված կարգով:

21. Մրցույթի արդյունքով նույն համապատասխան մարմնում քաղաքացիական ծառայության այլ պաշտոնի նշանակվելու դեպքում քաղաքացիական ծառայողի հետ վերջնահաշվարկ չի կատարվում:

22. Մրցույթն անվավեր է ճանաչվում դատական կարգով: Մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում հայտարարվում է նոր մրցույթ, որն անցկացվում է սույն օրենքով սահմանված կարգով:

23. Մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է Կառավարությունը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է Մարդու իրավունքների պաշտպանը, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը: ~~Մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է Կառավարությունը, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում՝ Մարդու իրավունքների պաշտպանը:~~

24. Թեստերը կազմելու, թեստային առաջադրանքները ձեւավորելու, թեստային առաջադրանքների բովանդակային առանձնահատկությունները, թեստային առաջադրանքների քանակը, հարցազրույցի անցկացման մեթոդաբանությունը եւ ձեւաչափը սահմանում է համակարգող փոխվարչապետը:»:

Հոդված 4. Օրենքի 11-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Թեստավորմանը մասնակցելու համար քաղաքացին փաստաթղթերը ներկայացնում է էլեկտրոնային եղանակով: Թեստավորման մասնակցության հարցը որոշում է քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարը:».

2) 4-րդ մասի «Քաղաքացին չի մասնակցում» բառերը փոխարինել «Քաղաքացուն չի թույլատրվում մասնակցել» բառերով.

3) 5-րդ մասի «նվազագույն միավորից բարձր միավոր ստացած» բառերը փոխարինել «նվազագույն միավորի շեմը հաղթահարած» բառերով, իսկ «գրասենյակն առցանց կարգով» բառերը՝ «գրասենյակը տեղեկատվական հարթակում» բառերով.

4) 7-րդ մասի «հինգ թեկնածու, ապա հրավիրվում են տվյալ մասնագիտությունն ունեցող առաջին հինգ թեկնածուն» բառերը փոխարինել «թեկնածու, ապա հրավիրվում են վարկանիշային ցուցակի հաջորդ համարներում գրանցված տվյալ մասնագիտությունն ունեցող թեկնածուները» բառերով.

5) 9-րդ մասի «բոլոր խմբերի արդյունքներն ամփոփելու հաջորդ աշխատանքային օրը» բառերը փոխարինել «յուրաքանչյուր խմբի արդյունքներն ամփոփելուց անմիջապես հետո» բառերով.

6) 10-րդ մասի 2-րդ նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ. «Վարկանիշային ցուցակում գրանցված թեկնածուն հանվում է վարկանիշային ցուցակից, եթե վարկանիշային ցուցակում գրանցվելուց հետո նշանակվել է հանրային ծառայության պաշտոնի կամ դիմում է ներկայացրել իրեն վարկանիշային ցուցակից հանելու համար:» բառերով.

Հոդված 5. Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում «յոթ աշխատանքային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչեւ մրցույթ հայտարարելը» բառերով, իսկ 4-րդ մասում «յոթ աշխատանքային օրվա ընթացքում» բառերը՝ «մեկ ամսվա ընթացքում» բառերով:

Հոդված 6. Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին կետ.

«3.1) պահեստազորային կամ զորահավաքային զինվորական ծառայություն իրականացնելու կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու դեպքերում.».

2) 7-րդ կետի «այլ դեպքերում» բառերը փոխարինել «դեպքում» բառով:

Հոդված 7. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 14.1-ին հոդվածով՝

«Հոդված 14.1. Համապատասխան մարմնում կատարողականի գնահատման արդյունքներով քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելը

1.Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն առաջանալու դեպքում պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավասու է ավելի բարձր թափուր պաշտոնում նշանակելու Կառավարության սահմանած կարգով վերջին երկու կիսամյակի կատարողականի գնահատման արդյունքներով դրական եզրակացություն ստացած այն քաղաքացիական ծառայողին, ով միաժամանակ՝

1) բավարարում է տվյալ թափուր պաշտոնի անձնագրի պահանջները.

2) երկու տարի անընդմեջ աշխատում է նույն համապատասխան մարմնում.

3) այդ մասին տվել է գրավոր համաձայնություն:

2.Քաղաքացիական ծառայողը չի կարող նշանակվել ավելի բարձր թափուր պաշտոնին, եթե տվյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարվել է մրցույթ:

3. Սույն հոդվածի 1-ին մասը չի տարածվում անվանացանկում կատարված լրացումների եւ փոփոխությունների հետեւանքով առաջացած քաղաքացիական ծառայության նոր պաշտոնների, ինչպես նաեւ համապատասխան մարմնի վերակազմակերպման եւ (կամ) կառուցվածքային փոփոխության հետեւանքով առաջացած քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների վրա:»:

Հոդված 8. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում «Պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հետ առնչվող» բառերը փոխարինել «Գաղտնիության ռեժիմը ապահովող» բառերով:

Հոդված 9. Օրենքի 19-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 19. Քաղաքացիական ծառայողի վերապատրաստումը

1. Քաղաքացիական ծառայողներն իրավունք ունեն բարելավելու եւ պարտավոր են բարելավել իրենց մասնագիտական գիտելիքները եւ կոմպետենցիաները շարունակական

մասնագիտական զարգացման սկզբունքի վրա հիմնված վերապատրաստումներին մասնակցելու միջոցով:

2. Կոմպետենցիաների, ինչպես նաեւ աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների համանման (նույնաբովանդակ) գործառույթներից բխող մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպում է քաղաքացիական ծառայության գրասենյակը, իսկ համապատասխան մարմնի գործունեության հիմնական ոլորտներից բխող գործառույթների իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները՝ համապատասխան մարմինը:

3. Վերապատրաստումն իրականացվում է յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի համար ըստ անհատական ծրագրի, որը կազմվում է քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատմանը զուգընթաց իրականացված վերապատրաստման կարիքների գնահատման հիման վրա:

4. Վերապատրաստում իրականացվում է նաեւ քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով քաղաքացիական ծառայողի մասնագիտական գիտելիքների եւ կոմպետենցիաների տիրապետման նոր պահանջների սահմանման դեպքում՝ քաղաքացիական ծառայողի կամ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի նախաձեռնությամբ:

5. Քաղաքացիական ծառայողն իրավունք ունի պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի համաձայնությամբ մասնակցելու իր զբաղեցրած պաշտոնի անձնագրով նախատեսված գործառույթների եւ համապատասխան մարմնի գերակա խնդիրների արդյունավետ լուծմանն ուղղված վերապատրաստման դասընթացների:

6. Մեկանգամյա վերապատրաստման մասնակցության առավելագույն ժամկետը վեց ամիս է:

7. Համապատասխան մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վերապատրաստումները կազմակերպելու եւ այդ վերապատրաստումներին քաղաքացիական ծառայողների մասնակցությունն ապահովելու համար:

8. Գլխավոր քարտուղարը վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքներն ամփոփելուց հետո կազմում է համապատասխան մարմնի քաղաքացիական

ծառայողների վերապատրաստման ծրագիրը եւ ներկայացնում քաղաքացիական ծառայության գրասենյակ՝ համաձայնեցման:

9. Վերապատրաստման հետ կապված ծախսերը կատարվում են պետական բյուջեի, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

10. Վերապատրաստումների արդյունքով քաղաքացիական ծառայողը ստանում է կրեդիտներ: Անհատական ծրագրով հաստատված համապատասխան կրեդիտներն ստանալուց հետո քաղաքացիական ծառայողը համարվում է վերապատրաստված:

11. Սույն օրենքի հիման վրա քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստողներին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու եւ անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաեւ համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիրը կազմելու ձեւը սահմանում է համակարգող փոխվարչապետը:

12. Օրենքով կարող է նախատեսվել քաղաքացիական ծառայողի պարտադիր վերապատրաստում անցնելու պարտականություն:»:

Հոդված 10. Օրենքի 21-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «ներքին կանոնները խախտելու եւ (կամ)» բառերից հետո լրացնել «ծառայողական քննություն անցկացնելու կարգը խախտելու եւ (կամ)» բառերը:

2) 12-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 11. Օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասում «զինվորական ծառայության զորակոչված» բառերից հետո լրացնել «պահեստազորային կամ զորահավաքային զինվորական ծառայություն իրականացնող կամ որպես զինվորական ծառայության մեջ չգտնվող անձ (կամավորական)՝ կամավորական հիմունքներով Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցող» բառերը:

Հոդված 12. Օրենքի 31-րդ հոդվածի 6-րդ մասում «Փորձնակ գրանցելու եւ» բառերը փոխարինել «Փորձնակի գրանցման, ստաժի հաշվարկման, աշխատաժամանակի սահմանման եւ» բառերով:

Հոդված 13. Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«4. Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովն անհամատեղելիության պահանջների եւ (կամ) այլ սահմանափակումների եւ (կամ) վարքագծի սկզբունքների եւ դրանցից բխող վարքագծի կանոնների եւ (կամ) շահերի բախման կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն եւ մեթոդական աջակցություն ստանալու համար կարող է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:»:

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6-րդ մաս՝

«6. Քաղաքացիական ծառայության էթիկայի հանձնաժողովը առաջարկում է բարեվարքության հարցերով կազմակերպչին տվյալ ծառայողական քննության շրջանակներում կատարել բարեվարքության համակարգին առնչվող ուսումնասիրություններ:»:

Հոդված 14. Օրենքի 35-րդ հոդվածի 3-4-րդ մասերը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ժամկետի ավարտից հետո բողոքի բացակայության դեպքում, իսկ բողոքարկման դեպքում համապատասխան եզրակացությունն ստանալուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, գլխավոր քարտուղարը եզրակացությունը հրապարակում է այդ մարմնի պաշտոնական կայքէջում:

4. Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը եզրակացության հրապարակումից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, քննարկում է եզրակացությունը եւ ընդունում համապատասխան որոշում, որը հրապարակվում է տվյալ մարմնի պաշտոնական կայքէջում:»:

Հոդված 15. Օրենքի 37-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1 կետով՝

«4.1) դատական կարգով մրցույթն անվավեր ճանաչվելու դեպքում.».

2) 3-րդ մասի «Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները» բառերը փոխարինել ~~«Կատարողականի մեկ կիսամյակի գնահատման~~

~~արդյունքը»~~ «Կատարողականի տարեկան գնահատականը, որը կիսամյակային գնահատականների միջին թվաբանականն է,» բառերով.

3) 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«6. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հիմքերը (բացառությամբ 2-4-րդ, 11-րդ, 17-րդ կետերով նախատեսված հիմքերի) ի հայտ գալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը երկու աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարելու մասին իրավական ակտ:».

4) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6.1-ին եւ 6.2-րդ մասեր՝

«6.1. Սույն հոդվածի 2-րդ մասի 2-4-րդ կետերով նախատեսված հիմքերը ի հայտ գալու դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարելու մասին իրավական ակտը ընդունում է սույն օրենքի 21-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված ժամկետը լրանալուց հետո՝ երկու աշխատանքային օրվա ընթացքում:

6.2. Սույն հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով նախատեսված դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարելու մասին համապատասխան իրավական ակտը կարող է ընդունել ոչ շուտ, քան թափուր պաշտոն առաջանալուց մեկ ամիս առաջ:»:

Հոդված 16. Օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասում լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին կետ՝

«3.1) ուսումնասիրում է համապատասխան մարմինների կողմից սույն օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված մրցույթ հայտարարելու ժամկետի խախտումները եւ անհրաժեշտության դեպքում առաջարկություն է ներկայացնում համակարգող փոխվարչապետին կամ վարչապետին.»:

Հոդված 17. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն հոդվածի 2-3-րդ մասերով նախատեսված հոդվածների:

2. Սույն օրենքի 3-6-րդ, 8-14-րդ եւ 16-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում դրանցով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու օրը:

3. Սույն օրենքի 7-րդ հոդվածը եւ 15-րդ հոդվածի 2-րդ կետը ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

4. Սույն օրենքի ընդունումից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեց ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ՕՐԵՆՔ) ՆԱԽԱԳԾԻ (Կ-938-07.10.2024-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**Նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածում «8-րդ» թվանշանից առաջ անհրաժեշտ է լրացնել «Օրենքի» բառը:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
2.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 15-րդ հոդված	Նախագծի 15-րդ հոդվածով նախատեսվում է Օրենքի 37-րդ /***Քաղաքացիական ծառայողին պաշտոնից ազատելու և ծառայության դադարման հիմքերը***/ հոդվածի 3-րդ մասում «Երկու տարի անընդմեջ կատարողականի տարեկան գնահատման արդյունքները» բառերը փոխարինել «Կատարողականի մեկ կիսամյակի գնահատման արդյունքը» բառերով: Այսպիսով՝ նախագծով նախատեսված փոփոխության արդյունքում ստացվում է, որ Կատարողականի ***մեկ կիսամյակի*** գնահատման արդյունքը Կառավարության սահմանած տոկոսից (միավորից) ցածր լինելու	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			դեպքում պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձն իրավունք ունի դադարեցնելու քաղաքացիական ծառայողի լիազորությունները: Այս առումով գտնում ենք, որ ընդամենը ***մեկ կիսամյակի արդյունքներով*** քաղաքացիական ծառայողի լիազորությունները դադարեցնելու վերաբերյալ կարգավորումը գտնում ենք, որ խնդրահարույց է համաչափության, հանրային ծառայողի հիմնական իրավունքների՝ սոցիալական պաշտպանության և ապահովության և իրավական պաշտպանության ապահովման տեսանկյունից: Այս առումով հարկ ենք համարում անդրադառնալ նաև Օրենքի 21-րդ հոդվածի կարգավորումներին, որի համաձայն՝ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու և (կամ) ոչ պատշաճ կատարելու և (կամ) ծառայողական լիազորությունները վերազանցելու և (կամ) աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու և (կամ) քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու, բացառությամբ նվերներ ընդունելու սահմանափակումների, և (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու և (կամ) շահերի բախման կանոնները խախտելու դեպքերում ***քաղաքացիական ծառայողի նկատմամբ*** սահմանված կարգով ***կիրառվում են***		

			սույն օրենքով սահմանված կարգապահական տույժերը: Իսկ կարգապահական տույժերը դասակարգվում են երկու տեսակի՝ թեթև և խիստ. 1) թեթև կարգապահական տույժերն են՝ ա. նախազգուշացում, բ. նկատողություն. 2) խիստ կարգապահական տույժերն են՝ ա. խիստ նկատողություն, բ. հիմնական աշխատավարձի իջեցում մինչև 20 տոկոսով, բայց ոչ ավելի, քան բազային աշխատավարձի չափը, գ. ծառայության դադարեցում: Այսպիսով ստացվում է, որ ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու համար քաղաքացիական ծառայողի նկատմամբ կարող է կիրառվել նախազգուշացում կամ նկատողություն, իսկ մեկ կիսամյակի գնահատականի ցածր լինելու պարագայում քաղաքացիական ծառայողի լիազորությունները կարող են դադարեցվել: Նշվածի համատեքստում գտնում ենք, որ նախատեսված կարգավորումները համաչափ չեն: Ըստ այդմ, առաջարկում ենք, Նախագծի 15-րդ հոդվածի 2-րդ մասում «Կատարողականի մեկ կիսամյակի գնահատման արդյունքը» բառերը փոխարինել «Կատարողականի տարեկան գնահատականը, որը կիսամյակային գնահատականների միջին թվաբանականն է,» բառերով:		

3.	***ՀՀ կառավարություն***	Նախագծի 17-րդ հոդված	Նախագծի 17-րդ հոդվածի 4-րդ մասում անհրաժեշտ է «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառով:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:
4.	***Պատգամավոր Վլադիմիր Վարդանյան***	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի՝ 1) 11-րդ մասի 1-ին նախադասությունը «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի» բառերից հետո լրացնել «, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղարի» կետադրական նշանով և բառերով, 2) 11-րդ մասի 2-րդ նախադասությունը «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի» բառերից հետո լրացնել «, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղարի» կետադրական նշանով և բառերով, իսկ «Հաշվեքննիչ պալատում՝ Հաշվեքննիչ պալատը» բառերը փոխարինել «Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և Հաշվեքննիչ պալատում՝ համապատասխանաբար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և Հաշվեքննիչ պալատը» բառերով, 3) 14-րդ մասի 2-րդ նախադասությունը «Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի» բառերից հետո լրացնել «, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի» կետադրական նշանով և բառերով,	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:

			4) 14-րդ մասի 3-րդ նախադասությունը «Մարդու իրավունքների պաշտպանը» բառերից հետո լրացնել «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գլխավոր քարտուղարի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար անցկացվող մրցույթի հանձնաժողովը ձեւավորում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը,» բառերով և կետադրական նշանով, 5) 23-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «23. Մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է Կառավարությունը: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում մրցույթ անցկացնելու կարգը սահմանում է Մարդու իրավունքների պաշտպանը, իսկ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:		